**Հայտարարություն**

**Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկի (0,5 դրույքաչափ), ՆԶՊ-ի (3 դասաժամ), ֆիզիկայի (4 դասաժամ), ռուսաց լեզվի (12 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների խումբ (3 դասաժամ), ՀԵՊ-ի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավոր-ման փուլն անցկացվում է' ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել'

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կա-րող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հուլիսի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2022 թ. օգոստոսի 1-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոցում, հասցեն՝ Լոռու մարզ, Ծաղկաշատ համայնք, 3- րդ փողոց, շենք 12:

Տեղեկությունների համար զանգահարել (099)02-35-80 հեռախոսահամարով: